**ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/157**

ք. Մեծամոր «18» դեկտեմբեր 2026թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս Համայնքի ղեկավար՝ Է. Հովհաննիսյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Ջրաղացպանյանի, ով գործում է «ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 316,000.00 (երեք հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ, կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման,կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չտրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը * |
|---|---|---|
| 1 | Կապալառուն չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով |
| 2 | Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով |
| 3 | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 2 տոկոսի չափով |
| 4 | Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի վերին շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով |
| 5 | Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

| | | |
|---|---|---|
| | նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում) | |
| 6 | Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 7 | Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 8 | Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1.5 տոկոսի չափով |
| 9 | Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 10 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 11 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 12 | Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 13 | Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 14 | Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 15 | Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է **7** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի

ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001628
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝

------------------------------ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ն
ՀՀ Արմավիր համայնք, գ. Բամբակաշատ 4փ. 2տ.
no_ona@mail.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108167632
ՀՎՀՀ 04417375

Տնօրեն՝

------------------------------ Ա. Ջրաղացպանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«18» հունվարի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/157 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | չափման միավորը | ընդհանուր քանակը | գումար | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը* |
| 1 | 71351540/501 | ՀՀ Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրով անցնող Т-3-16 ճանապարհի եզրերում 30*34սմ տիպի ե/բ վաքերի տեղադման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | ՀՀ Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրով անցնող Т-3-16 ճանապարհի եզրերում 30*34սմ տիպի ե/բ վաքերի տեղադման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ համաձայն Հավելված 1.1-ի | դրամ | 1 | 158000 | Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գ. Արմավիր | Պայմանագիրը կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝<br><br>Շինարարական աշխատանքներին զուգընթաց՝ սկզբից մինչ ավարտը, որը սահմանված է 30 օրացուցային օր: |
| 2 | 71351540/502 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրով անցնող Т-3-52 և Т-3-11 ճանապարհների եզրերում RT30*34սմ տիպի ե/բ վաքերի տեղադման աշխատանքների | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրով անցնող Т-3-52 և Т-3-11 ճանապարհների եզրերում RT30*34սմ տիպի ե/բ վաքերի տեղադման աշխատանքների | դրամ | 1 | 158000 | Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գ. Նալբանդյան | Պայմանագիրը կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | որակի տեխնիկական հսկողության ծառայություններ համաձայն Հավելված 1.1-ի | | | | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝<br><br>Շինարարական աշխատանքներին զուգընթաց՝ սկզբից մինչ ավարտը, որը սահմանված է 30 օրացուցային օր: |
| Ընդամենը | | | | 316,000.00 | | | |

*Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի և համապատասխան շինարարական աշխատանքների կատարման պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001628
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝

--------------------------- Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ն
ՀՀ Արմավիր համայնք, գ. Բամբակաշատ 4փ. 2տ.
no_ona@mail.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108167632
ՀՎՀՀ 04417375

Տնօրեն՝

--------------------------- Ա. Ջրաղացպանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1.1
«18» փետրվարի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/157 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
## տեխնիկական հսկողության ծառայության
## /վերաբերվում է բոլոր չափաբաժիններին/

| | |
|---|---|
| *Ֆինանսավորման աղբյուր* | Մեծամոր համայնքի բյուջե |
| *Պատվիրատու* | Մեծամորի համայնքապետարան |
| *Աշխատանքի տեսակը* | Ըստ ծավալաթերթ-նախահաշվի |
| *Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ* | •Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ. թիվ 44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում, այդ թվում՝ ծածկման շինմոնտաժային աշխատանքներին, ընդ որում՝ տեխնիկական հսկիչը պետք է ընդգրկված լինի Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի պատասխանատու անձանց ներդիրում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:<br>• Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին համապատասխանությունն ապահովելու նպատակով, պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը<br>• Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը<br>• Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին<br>• Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, կանխել աշխատանքների կատարման ակնհայտ ձգձգում-ուշացումները, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի<br>• Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար<br>• Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար<br>• Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման համար անհրաժեշտ փաստաթղթերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով<br>• Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը<br>• Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր)<br>• Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:<br>• Պարտադիր պահանջ՝ համապատասխան՝<br>«Շինարարության որակի տեխնիկական հսկողություն» լիցենզիա՝ 1-ին կամ 2-րդ դասի, «ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա)» 1-ին կամ 2-րդ դաս ներդիրի առկայություն |
| | •Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ **<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>**, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:<br>• ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան՝ ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): |

| | |
|---|---|
| | ***Ավարտական հաշվետվությունը*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով)<br>• ***Ընթացիկ հաշվետվությունները*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հնգօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:<br>• ***Ավարտական հաշվետվությունը*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հնգօրյա ժամկետում: |
| *Նորմատիվային պահանջներ* | Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝<br>• ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի<br>• Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. <<Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ>> հրամանի<br>• ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման |

| ***Ծառայության մատուցման ժամկետը** | |
|---|---|
| *Սկիզբը* | *Ավարտը* |
| Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո, համապատասխան շինարարական աշխատանքների կատարման սկիզբը | Տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման ժամկետի ավարտը սահմանվում է համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001628
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝

----------------------------- Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ն
ՀՀ Արմավիր համայնք, գ. Բամբակաշատ 4փ. 2տ.
no_ona@mail.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108167632
ՀՎՀՀ 04417375

Տնօրեն՝

----------------------------- Ա. Ջրաղացպանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1.1
«18» մայիսի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/157 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
# /1-ին ՉԱՓԱԲԱԺԻՆ/

## Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրով անցնող T-3-16 ճանապարհի եզրերում 30*34սմ տիպի ե/բ վաքերի տեղադրում

| No | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Միավորի արժեքը | Գումարը հազ. Դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Հողային աշխատանքներ** | | | 0.000 | 0.000 |
| 1 | գրունտի մշակում էքսկավատորով /IV կարգ բարձում Ա/ ինքնաթափ | մ3 | 171.89 | 0.936 | 160.882 |
| 2 | Գրունտի տեղափոխում 3 կմ լցակույտ | տն | 326.591 | 0.399 | 130.284 |
| 3 | Աշխատանք լցակույտում | մ3 | 171.89 | 0.072 | 12.354 |
| | **վաքեր** | | | 0.000 | 0.000 |
| 1 | Ավազակոպճային նախապատրաստական շերտ վաքերի տակ | մ3 | 19.1 | 13.439 | 256.686 |
| 2 | Հավաքովի ե/բ 30*34 վաքերի տեղադրում հիդրոմեկուսացումով | մ3 | 31.825 | 39.245 | 1248.966 |
| 3 | Հավաքովի ե/բ 30*34 վաքերի արժեք | հատ | 127.3 | 45.352 | 5773.314 |
| | **Խողովակներ** | | | 0.000 | 0.000 |
| 1 | Խողովակների ավազային նախաշերտ | մ3 | 3.378 | 11.444 | 38.656 |
| 2 | Մետաղական խողովակների տեղադրում d= 325*6,0մմ ГОСТ 10704-91 | գմ | 96.5 | 40.405 | 3899.080 |
| 3 | Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ2 | 98.47825 | 0.749 | 73.717 |
| | **Ասֆալտբետոնե ծածկույթի կտրումքանդում և վերականգնում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում/սղոցում | մ | 39.4 | 0.539 | 21.243 |
| 2 | Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով h=10սմ /ГОСТ 23735-2014 | մ3 | 1.97 | 12.661 | 24.942 |
| 6 | Հիմքի կառուցում խճակոպճավազային C-5 խառնուրդով h=15սմ ГОСТ 25607-2009 | մ2 | 19.7 | 2.499 | 49.229 |
| 4 | Ծածկի կառուցում մանրահատիկ Բ տիպի ասֆալտբետոնե խառնորդով h=5 սմ ГОСТ 9128-2013 | մ2 | 19.7 | 6.151 | 121.173 |
| | **Հանգույց 1 բաշխիչ հորերի կառուցում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | գրունտի մշակում էքսկավատորով /IV կարգ բարձում Ա/ ինքնաթափ | մ3 | 0.686 | 0.936 | 0.642 |
| 2 | Գրունտի տեղափոխում 3 կմ լցակույտ | տն | 1.3034 | 0.399 | 0.520 |
| 3 | Աշխատանք լցակույտում | մ3 | 0.686 | 0.072 | 0.049 |
| 4 | հորի խճային հիմք h=10 սմ | մ3 | 0.09 | 11.895 | 1.071 |
| 5 | հորի կառուցում F-150, W-4, B-20 դասի բետոնով | մ3 | 0.39 | 107.746 | 42.021 |
| 6 | հորի գրունտի հետ շբվող մակերեսի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ2 | 2.4 | 1.355 | 3.253 |
| | **Հանգույց 2 վաքի և խողովակի միացման հանգույցի կառուցում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | հորի խճային հիմք h=10 սմ | մ3 | 0.612 | 11.895 | 7.280 |
| 2 | հորի կառուցում F-150, W-4, B-20 դասի բետոնով | մ3 | 0.68 | 107.746 | 73.267 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Հանգույց 3 անցումային հորերի կառուցում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | գրունտի մշակում էքսկավատորով /IV կարգ բարձում Ա/ ինքնաթափ | մ3 | 2.216 | 0.936 | 2.074 |
| 2 | Գրունտի տեղափոխում 3 կմ լցակույտ | տն | 4.2104 | 0.399 | 1.680 |
| 3 | Աշխատանք լցակույտում | մ3 | 2.216 | 0.072 | 0.159 |
| 4 | հորի խճային հիմք h=10 սմ | մ3 | 0.4 | 11.895 | 4.758 |
| 5 | հորի կառուցում F-150, W-4, B-20 դասի բետոնով | մ3 | 2 | 107.746 | 215.491 |
| 6 | հորի գրունտի հետ շբվող մակերեսի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ2 | 12.8 | 1.355 | 17.348 |
| 7 | Մետաղական ցանցերի պատրաստում | տն | 0.1988 | 141.276 | 28.086 |
| 8 | Պողպատյա ամրան 22A 500c /ГОСТ 34028- 2016 | տն | 0.1076 | 520.043 | 55.957 |
| 9 | Պողպատյա անկյունակ63*63*5/ ГОСТ 8509-93 | գմ | 11.04 | 2.848 | 31.443 |
| 10 | Պողպատյա անկյունակ50*50*5/ ГОСТ 8509-93 | գմ | 10.2 | 2.068 | 21.094 |
| 11 | Պողպատե դետալների երկշերտ ներկում | մ2 | 6.4 | 1.720 | 11.008 |
| | **Հանգույց 4 գ/ու վաքի և խողովակի միացման հանգույցի կառուցում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | հորի խճային հիմք h=10 սմ | մ3 | 0.48 | 11.895 | 5.710 |
| 2 | հանգույցի կառուցում F-150, W-4, B-20 դասի բետոնով | մ3 | 2.96 | 107.746 | 318.927 |
| 3 | հանգույցի գրունտի հետ շբվող մակերեսի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ2 | 8.8 | 1.355 | 11.927 |
| | **Հանգույց 5 գ/ու ջրատարի և վաքի միացման հանգույցի կառուցում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | հորի խճային հիմք h=10 սմ | մ3 | 0.06 | 11.895 | 0.714 |
| 2 | հանգույցի կառուցում F-150, W-4, B-20 դասի բետոնով | մ3 | 0.37 | 107.746 | 39.866 |
| 3 | հանգույցի գրունտի հետ շբվող մակերեսի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ2 | 0.7 | 1.355 | 0.949 |
| | Վաքերի վրա տեղադրվող մետաղական ցանցերի կառուցում | | | 0.000 | 0.000 |
| 1 | Մետաղական ցանցերի պատրաստում | տն | 0.13413 | 141.276 | 18.949 |
| 2 | Պողպատյա ամրան 22A 500c /ГОСТ 34028- 2016 | տն | 0.07059 | 520.043 | 36.710 |
| 3 | Պողպատյա անկյունակ63*63*5/ ГОСТ 8509-93 | գմ | 10.88 | 3.211 | 34.935 |
| 4 | Պողպատե դետալների երկշերտ ներկում | մ2 | 10 | 1.720 | 17.200 |
| | **Ընդամենը** | | | | **12813.614** |

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

**Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովվում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001628
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝
------------------------ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ն
ՀՀ Արմավիր համայնք, գ. Բամբակաշատ 4փ. 2տ.
no_ona@mail.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108167632
ՀՎՀՀ 04417375

Տնօրեն՝
------------------------ Ա. Ջրաղացպանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1.2
«18» հունվար 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/157 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
# /2-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆ/

## ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրով անցնող T-3-52 և T-3-11 ճանապարհների եզրերում RT 30*34սմ տիպի ե/բ վաքերի տեղադրում

| No | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Միավորի արժեքը | Գումարը հազ. Դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Հողային աշխատանքներ** | | | | |
| 1 | գրունտի մշակում էքսկավատորով/կողլիցք /IV կարգ | մ3 | 86 | 0.793 | 68.188 |
| 2 | գրունտի մշակում մինչև 30 մ տեղափոխումով/ լիցք | մ3 | 19.1 | 0.671 | 12.822 |
| 3 | Գրունտի խտացում և ամրացում թրթռագլդոնով, 6 անցումով 25 սմ շերտի հաստությամբ ջրի լցաբաշխումով | մ3 | 19.1 | 0.017 | 0.317 |
| 4 | Ավելորդ գրունտի բարձում էքսկավատորով /IV կարգ | մ3 | 66.9 | 0.936 | 62.616 |
| 5 | Գրունտի տեղափոխում 12 կմ լցակույտ | տն | 127.11 | 0.973 | 123.725 |
| 6 | Աշխատանք լցակույտում | մ3 | 66.9 | 0.072 | 4.808 |
| | **վաքեր** | | | 0.000 | 0.000 |
| 1 | Ավազակոպճային նախապատրաստական շերտ վաքերի տակ | մ3 | 19.9 | 13.439 | 267.438 |
| 2 | Հավաքովի ե/բ 30*34 վաքերի տեղադրում հիդրոմեկուսացումով | մ3 | 33.1666667 | 39.245 | 1301.620 |
| 3 | Հավաքովի ե/բ 30*34 վաքերի արժեք | հատ | 132.666667 | 45.352 | 6016.704 |
| | **Խողովակներ** | | | 0.000 | 0.000 |
| 1 | Խողովակների ավազային նախաշերտ | մ3 | 1.435 | 11.444 | 16.422 |
| 2 | Մետաղական խողովակների տեղադրում d= 325*6,0մմ ГОСТ 10704-91 | գմ | 41 | 40.405 | 1656.604 |
| 3 | Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ2 | 41.8405 | 0.749 | 31.320 |
| | **Վաքի և խողովակի միացման հանգույցի կառուցում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | միացման հանգույցի կառուցում F-150, W-4, B-20 դասի բետոնով | մ3 | 0.32 | 107.746 | 34.479 |
| | **ՆԿ 0+00-ում միացման հորի կառուցում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | հորի խճային հիմք h=10 սմ | մ3 | 0.17 | 11.895 | 2.022 |
| 2 | հորի կառուցում F-150, W-4, B-20 դասի բետոնով | մ3 | 0.97 | 107.746 | 104.513 |
| 3 | հորի գրունտի հետ շբվող մակերեսի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ2 | 1.2 | 1.355 | 1.626 |
| | ՆԿ 2+19-ում միացման հանգույցի կառուցում | | | 0.000 | 0.000 |
| 1 | միացման հանգույցի խճային հիմք h=10 սմ | մ3 | 0.11 | 11.895 | 1.308 |
| 2 | միացման հանգույցի կառուցում F-150, W-4, B-20 դասի բետոնով | մ3 | 0.63 | 107.746 | 67.880 |
| 3 | միացման հանգույցի գրունտի հետ շբվող մակերեսի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ2 | 2.08 | 1.355 | 2.819 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **ՆԿ 2+84-ում Վաքի և խողովակի միացման հանգույցի կառուցում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | հողի խճային հիմք h=10 սմ | մ3 | 0.19 | 11.895 | 2.260 |
| 2 | միացման հանգույցի կառուցում F-150, W-4, B-20 դասի բետոնով | մ3 | 1.2 | 107.746 | 129.295 |
| 3 | միացման հանգույցի գրունտի հետ շբվող մակերեսի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ2 | 4.75 | 1.355 | 6.438 |
| | **ՆԿ 4+40-ում խողովակի և ջրարգելակ փակոցի միացման հանգույցի կառուցում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | միացման հանգույցի խճային հիմք h=10 սմ | մ3 | 0.34 | 11.895 | 4.044 |
| 2 | միացման հանգույցի կառուցում F-150, W-4, B-20 դասի բետոնով | մ3 | 1.3 | 107.746 | 140.069 |
| 3 | միացման հանգույցի գրունտի հետ շբվող մակերեսի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ2 | 3.3 | 1.355 | 4.473 |
| | **ՆԿ 2+84-ում և ՆԿ 4+40-ում ջրարգելակ փակոցների կառուցում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | Մետաղական կարկասի պատրաստում | տն | 0.031986 | 139.070 | 4.448 |
| 2 | Պողպատյա անկյունակ 40*40*3/ ГОСТ 8509-93 | գմ | 2.228 | 0.961 | 2.142 |
| 3 | Պողպատյա տաշտաձև հեծան N6/ ГОСТ 8240-97 | գմ | 0.4 | 2.286 | 0.914 |
| 4 | Պողպատյա տաշտաձև հեծան N10/ ГОСТ 8240-97 | գմ | 1.6 | 4.535 | 7.256 |
| 5 | Մանեկ M 30 / ГОСТ 15526-70 | կգ | 0.5 | 1.814 | 0.907 |
| 6 | Հեղյուս M 16*50 / ГОСТ 15526-70 | կգ | 0.226 | 1.814 | 0.410 |
| 7 | պողպատե թիթեղ 600*600*2 | մ2 | 0.72 | 10.449 | 7.523 |
| 8 | Մետաղական տարրերի երկշերտ յուղաներկում | մ2 | 2.72 | 2.027 | 5.513 |
| | **Ե/Բ վաքերի վրա տեղադրվող մետաղական ցանցերի կառուցում** | | | 0.000 | 0.000 |
| 1 | Մետաղական ցանցերի պատրաստում | տն | 1.2072 | 141.276 | 170.548 |
| 2 | Պողպատյա ամրան 22A 500c /ГОСТ 34028- 2016 | տն | 0.6353 | 520.043 | 330.383 |
| 3 | Պողպատյա անկյունակ63*63*6/ ГОСТ 8509-93 | գմ | 571.9 | 2.848 | 1628.833 |
| 4 | Մետաղական ցանցերի երկշերտ յուղաներկում | մ2 | 90 | 2.027 | 182.431 |
| | **Ընդամենը** | | | | **12405.120** |

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

** Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001628
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝

------------------------------ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ն
ՀՀ Արմավիր համայնք, գ. Բամբակաշատ 4փ. 2տ.
no_ona@mail.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108167632
ՀՎՀՀ 04417375

Տնօրեն՝

------------------------------ Ա. Քրաղացպանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բնակավայրով անցնող T-3-<br>52 և T-3-11<br>ճանապարհների եզրերում<br>RT30*34սմ տիպի ե/բ<br>վաքերի տեղադրման<br>աշխատանքների որակի<br>տեխնիկական<br>հսկողության<br>ծառայություններ | | | | | | | | | | | | | | | |
| Ընդհամենը՝ | | | | | | | | | | | | | | | | | - |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001628
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝

------------------------ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ն
ՀՀ Արմավիր համայնք, գ. Բամբակաշատ 4փ. 2տ.
no_ona@mail.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108167632
ՀՎՀՀ 04417375

Տնօրեն՝

------------------------ Ա. Ջրաղացպանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«____» ________________ 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/157 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
___________________________________
___________________________________
գտնվելու վայրը _______________
հհ ___________________________
հվհհ __________________________

Պատվիրատու
___________________________________
___________________________________
գտնվելու վայրը _______________
հհ___________________________
հվհհ__________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ___________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
___________________________________
ստորագրություն
___________________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
___________________________________
ստորագրություն
___________________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«____» __________________ 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/157 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
համարը պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_________________________
ազգանուն, անուն
_________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_________________________
ազգանուն, անուն
_________________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«____» ________________ 2026թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/157 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ֆինանսական գործակալի անվանումը___________ հայտնում է, որ.

1. ____պատվիրատուի անվանումը___-ի և ________կատարողի անվանումը______-ի միջև «----» ___________ 20 թ. Կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և __կատարողի անվանումը_________-ի միջև «----» ___________ 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.